***

Ամէն էակ ինձ՝ էակից,
Ամենուն դէմ սիրտս բաց.
Ամէն ցաւին ես ցաւակից,
Աչքս ամենուն համար բաց:

«Դիր»ը նոյն է մեր ամենուն,
— Պատրանքներով օրորուել,
Նայիլ պահն մը սա արեւուն,
Յետոյ Մութին մէջ թաղուիլ:

Մենք ամէնքս ալ Բախտին ձրգուած,
Պարապին մէջ անսահման ...
Որքեր ենք մենք ընդմիշտ լքուած,
Անսպասեալ, անկայան:

ՔԱՌԵԱԿՆԵՐ

Բախտն առանց ինձ՝ հարցընելու զիս բանտարկած ըսեղծեց,
Եւ փոխարէն այդ «Ճրնորհ»ին ծրնած օրս զիս անիծեց.
'Թէ հանդիպիմ օր մը իրեն, պիտի բրուենք օձիքէն,
Պիտ՝ անարգեմ մարդոց առջեւ, բուքով երեսը օձեմ:

(ՊԱՏՈՒԻՐԱՆ)

Ինչ որ պիտի տաս, տուր սիրտիդ թասէն,
Սիրտէն բրխա՛ծը կը հասնի սիրտին,
Ա՜խ, որքա՜ն ծարաւ սիրտեր կը սպասեն,
Հիւղակէն միւսին սեմը պալատին:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@